ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՈՒՆԻՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Աշխարհագրական գիտելիքների միասնացման արդյունքում զարգանում է.**

1) քարտեզագրությունը
2) հասարակական աշխարհագրությունը
3) օդերևութաբանությունը
4) ֆիզիկական աշխարհագրությունը

2 **Հորիզոնի ո՞ր կողմի ազիմուտն է 270°:**

1) հարավային
2) արևմտյան
3) հյուսիսային
4) արևելյան

3 **Միջին մասշտաբի քարտեզներ են.**

1) 1:200 000 — 1:1000 000
2) 1:1000 000 — 1:5000 000
3) 1:500 000 — 1:10 000 000
4) 1:10 000 — 1:200 000

4 **Խոշորամասշտաբ այն գծապատկերները, որոնք չունեն աստիճանացանց, կոչվում են.**

1) քարտեզագրամ
2) ուրվագծային քարտեզներ
3) հատակագիծ
4) աշխարհի քարտեզներ

5 **Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 9000 000 է, ապա դրա անվանական մասշտաբը կլինի.**

1) 1 սմ-ում՝ 90 կմ
2) 1 սմ-ում՝ 900 կմ
3) 1 սմ-ում՝ 9000 կմ
4) 1 սմ-ում՝ 9 կմ

6 **Ի՞նչ է կոչվում ցամաքի որևէ կետի բարձրությունը՝ հաշվված ծովի մակարդակից.**

1) բացարձակ
2) ծանծաղուտ
3) հարաբերական
4) միջին

7 **Հրային (մագմային) ծագման ապար է.**

1) մարմարը
2) տորֆը
3) պեմզան
4) ավազը

8 **Ո՞ր դարաշրջանի ժամանակաշրջան են Տրիասը, Յուրան, Կավիճը։**

1) Արխեյան
2) Պալեոզոյան
3) Մեզոզոյան
4) Պրոտերոզոյան

9 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Ցամաքը արագ տաքանում է և դանդաղ սառչում։
2) Ջուրը դանդաղ տաքանում է և դանդաղ սառչում։
3) Ցամաքը դանդաղ տաքանում է և արագ սառչում։
4) Ջուրը դանդաղ տաքանում է և արագ սառչում։

10 **Մթնոլորտային ճնշումը կախված է.**

1) մթնոլորտային տեղումներից
2) ամպամածությունից
3) քամու արագությունից
4) օդի ջերմաստիճանից

11 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Ի տարբերություն հարթավայրային գետերի՝ լեռնային գետերն ունեն փոքր թեքություն։
2) Գետի ծախսը հունի լայնակի կտրվածքով մեկ վայրկյանում անցած ջրի քանակն է։
3) Մորենային թմբերը գետի քայքայիչ աշխատանքի արդյունքում առաջացած մակերևույթի ձևերն են։
4) Հարթավայրերում մակերևույթի բնույթից կախված՝ շատ հստակ է արտահայտվում գետերի ջրբաժան գիծը։

12 **«Լիճ — սնվող գետ» զույգերից ո՞րն է ճիշտ։**

1) Բայկալ — Լենա
2) Թանա — Նեղոս
3) Լադոգա — Ռոն
4) Նյասա — Կոնգո

13 **Բնութագրումով որոշել զոնան.**

Այս բնական զոնան տարածվում է մեծամասամբ հյուսիսային կիսագնդում և ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի և Եվրասիայի հյուսիսային շրջաններն ու նրանց հարող կղզիները: Կլիման մերձարկտիկական է: Ծառեր գրեթե չեն աճում, և տարածված են մամուռներն ու քարաքոսները: Ո՞ր բնական զոնան է.

1) տունդրա
2) սավաննա
3) տայգա
4) անապատ

14 **Տափաստանների բնական զոնային բնորոշ է.**

1) ամբողջ տարին կլիմայի չորությունը
2) խոտային բուսականության գերակշռությունը
3) հողի բազմամյա սառածությունը
4) ճմապողզոլային հողերի գերակշռությունը

15 **Ո՞ր կլիմայական գոտում կլիմայական մարզեր *չեն* առանձնացվում:**

1) հասարակածային
2) արևադարձային
3) բարեխառն
4) մերձարևադադարձային

16 **Որո՞նք են երիտասարդ լեռնաշղթաները:**

1) Վերխոյանսկի և Չերսկու
2) Տյան Շանի և Սայանների
3) Պիրենեյներ և Էլբուրս
4) Մեծ Ջրբաժան և Դրակոնյան

17 **Ո՞ր նեղուցում գտնվող կղզիների միջև է անցնում ամսաթվի փոփոխման գիծը:**

1) Բերինգի
2) Մոզամբիկի
3) Բոսֆորի
4) Ջիբլարթարի

18 **Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ամենահարավային մայրցամաքն է:
2) Ամենախոնավ մայրցամաքն է:
3) Ամենափոքր մայրցամաքն է:
4) Ամենաուշ հայտնագործված մայրցամաքն է:

19 **Կղզիների ո՞ր զույգը նույն կղզեխմբին *չի* պատկանում.**

1) Հոնսյու և Հոկայդո
2) Սումատրա և Ճավա
3) Իռլանդիա և Իսլանդիա
4) Կուբա և Հայիթի

20 **Որո՞նք են Հարավային Ամերիկայի հարթավայրերը։**

1) Կոլումբիական և Լավրենտյան
2) Միսիսիպիի և Մերձատլանտյան
3) Օրինոկոյի և Գվիանական
4) Միջագետքի և Արաբական

21 **Ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Հարավային Ամերիկան երկրագնդի ամենախոնավ մայրցամաքն է։
2) Հարավային Ամերիկայի կլիմայի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի Ատլանտյան օվկիանոսը։
3) Հարավային Ամերիկայի հարավային մասն ընկած է բարեխառն գոտում։
4) Հարավային Ամերիկան ընկած է հարավային կիսագնդի բոլոր կլիմայական գոտիներում։

22 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Բիզոնները հիմնականում ապրում են տայգայում։
2) Գորշ արջը և լուսանը տունդրային բնորոշ կենդանիներ են։
3) Կարիբու եղջերուն և բևեռային աղվեսը բարեխառն գոտու լայնատերև անտառների բնորոշ կենդանիներ են։
4) Պուման և մրջնակերը տիպիկ հյուսիսամերիկյան կենդանիներ են։

23 **Աֆրիկայի միջերկրածովային կլիմայական մարզի գետերը հորդանում են.**

1) յուրաքանչյուր կիսագնդի գարնանը
2) յուրաքանչյուր կիսագնդի ձմռանը
3) յուրաքանչյուր կիսագնդի աշնանը
4) յուրաքանչյուր կիսագնդի ամռանը

24 **Ո՞ր գետը *չի* հոսում Աֆրիկայով։**

1) Կոնգո
2) Հռենոս
3) Շարի
4) Զամբեզի

25 **«Լեռնային համակարգ — լեռնագագաթ» զույգերից ընտրել *ճիշտը*.**

1) Ալպեր — Կոսցյուշկո
2) Ապալաչներ — Ակոնկագուա
3) Էլբուրս — Դեմավենդ
4) Բալկաններ — Կապուտջուղ

26 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Արևմտասիբիրական դաշտավայրի կլիման բարեխառն ցամաքային է։
2) Պիրենեյան թերակղզու կլիման չափավոր ցամաքային է։
3) Սումատրա և Կալիմանտան կղզիների կլիման մերձհասարակածային է։
4) Արաբական թերակղզու կլիման միջերկրածովային է։

27 **Պետական կառավարման ձևը, երբ պետական իշխանության ներկայացուցիչներին ընտրում է ժողովուրդը, իսկ պետության նախագահին՝ պատգամավորները, կոչվում է.**

1) նախագահական հանրապետություն
2) սահմանադրական միապետություն
3) խորհրդարանական հանրապետություն
4) բացարձակ միապետություն

28 **Ո՞ր շարքի բոլոր երկրներն ունեն դաշնային վարչատարածքային կառուցվածք։**

1) Կանադա, Բրազիլիա, Գերմանիա, Հնդկաստան
2) Իրան, Լեհաստան, Արգենտինա, Ֆրանսիա
3) Ճապոնիա, Շվեյցարիա, Նիգերիա, Եգիպտոս
4) Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Ավստրալիա

29 **Հայաստանի Հանրապետության քաղաքաաշխարհագրական դիրքի առանձնահատկություններից *չէ։***

1) ռազմավարական գլխավոր դաշնակցի հետ անմիջական սահման չունենալը
2) սահմանակից բոլոր պետությունների հետ դիվանագիտական հարաբերություններ ունենալը
3) խոշոր պետությունների և ուժային կենտրոնների շահերի բախման ոլորտում լինելը
4) համաշխարհային նշանակության բաժանարար գծերի վրա լինելը

30 **Ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Քաղաքակրթության հնագույն օջախներն ավելի խիտ են բնակեցված։
2) Որոշ տարածքներում բնակչության մեծ խտությունը կարող է պայմանավորված լինել բնակչության բնական աճով և ներգաղթով։
3) Բարձրադիր լեռնային շրջաններն աչքի են ընկնում բնակչության խտության բարձր ցուցանիշով։
4) Հանքարդյունաբերության և էքստենսիվ գյուղատնտեսության տարածման շրջաններում բնակչության խտության ցուցանիշը ցածր է։

31 **Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքի ամենաերիտասարդ ճյուղն է.**

1) տեղեկատվական ոլորտը
2) գյուղատնտեսությունը
3) ծառայությունների ոլորտը
4) արդյունաբերությունը

32 **Քարտեզ 1-ում Ե տառով ո՞ր պետությունն է նշված.**

1) Ղազախստան
2) Ուզբեկստան
3) Տաջիկստան
4) Թուրքմենստան



Քարտեզ 1

33 **Քարտեզ 1-ում Ա տառով ո՞ր ծովն է նշված.**

1) Ճապոնական
2) Ֆիլիպինյան
3) Դեղին
4) Արևելաչինական

34 **Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում։
2) Նավթի հիմնական պաշարները տեղաբաշխված են Կուզբասի, Պեչորայի ավազաններում։
3) Քիմիական արդյունաբերությունը հենվում է բացառապես ներմուծվող հումքի վրա։
4) Բնական գազի պաշարներով գրավում է առաջին տեղը։

35 **Ֆրանսիայի սահմանակից պետություն չէ.**

1) Լյուքսեմբուրգ
2) Բելգիա
3) Լիխտենշտայն
4) Գերմանիա

36 **Սկանդինավյան թերակղզու պետություններից է.**

1) Պորտուգալիա
2) Շվեդիա
3) Շվեյցարիա
4) Դանիա

37 **Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Տարածաշրջանի տնտեսապես ամենազարգացած պետությունը Իսրայելն է։
2) Թուրքիայի տնտեսության առաջատար ճյուղը նավթարդյունահանումն է։
3) Իրանը և Իրաքը փյունիկյան արմավի մշակությամբ աշխարհի առաջատար երկրներն են։
4) Լիբանանում զարգացման բարձր մակարդակի է հասել ֆինանսավարկային համակարգը։

38 **Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը։**

1. Մալի	ա. Լուանդա
2. Անգոլա	բ. Բամակո
3. Զամբիա	գ. Լուսակա
4. Տանզանիա	դ. Դոդոմա

1) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
2) 1-բ, 2-ա, 3-գ, 4- դ
3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ

39 **Ո՞ր կղզեխումբն է Օվկիանիայում։**

1) Պոլինեզիան
2) Ֆոլկլենդյանը
3) Կուրիլյանը
4) Շպիցբերգենի

40 **Ո՞ր քաղաքում է տեղակայված Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կենտրոնական գրասենյակը։**

1) Լոս Անջելես
2) Նյու Յորք
3) Ֆիլադելֆիա
4) Բոստոն

41 **Լատինական Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Քաղաքներում շատ են ֆավելաները։
2) Ներկայումս բնակչության կեսից ավելին ապրում են քաղաքներում։
3) Ամենախիտը բնակեցված է Ամազոնի դաշտավայրը։
4) Բնակչությունն աչքի է ընկնում խայտաբղետ ազգային ու ռասայական կազմով։

42 **Ի՞նչը բնորոշ *չէ* Հայկական լեռնաշխարհին։**

1) հարակից տարածքների նկատմամբ բարձր դիրքադրությունը
2) վերընթաց գոտիականության լավ արտահայտվածությունը
3) բնական պայմանների մեղմությունը
4) երիտասարդ հրաբխականության ցայտուն արտահայտվածությունը

43 **Ընտրել գետերի այն զույգը, որոնք հոսում են արևմուտքից արևելք ուղղությամբ։**

1) Դեբեդ և Աղստև
2) Փամբակ և Ձորագետ
3) Արգիճի և Արփա
4) Ախուրյան և Քասաղ

44 **«Լեռնաշղթա — լեռնանցք» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Բազումի — Պուշկինի
2) Վարդենիսի — Որոտանի
3) Վայքի — Վարդենյաց
4) Զանգեզուրի — Սևանի

45 **Ո՞ր քաղաքներն ունեն 20-50 հազար բնակչություն։**

1) Նոյեմբերյանը և Բերդը
2) Արմավիրը և Արտաշատը
3) Աշտարակը և Ջերմուկը
4) Վանաձորը և Հրազդանը

46 **ՀՀ գյուղական բնակավայրերի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Խոշոր գյուղերի գերակշռող մասը Սյունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզերում է։
2) Լեռնային մասնատված մակերևույթ ունեցող շրջաններում գյուղական բնակավայրերն իրարից հեռու են ու ցրված։
3) Արարատյան դաշտում գյուղական բնակավայրերն իրար շատ մոտ են, երբեմն՝ միաձուլված։
4) Բարձրալեռնային գյուղերից դեպի քաղաքներ և ցածրադիր բնակավայրեր կատարվող բնակչության ներգաղթ է դիտվել։

47 **Ո՞ր պնդումն է *սխալ.***

1) ՀՀ արդյունաբերության ճյուղային կառուցվածքում հաշվվում է տասից ավելի համալիր ու ճյուղ և հարյուրից ավելի ենթաճյուղ ու արտադրություն։
2) ՀՀ-ում սպասարկման ոլորտը նյութական արտադրության ոլորտից ավելի է զարգանում։
3) ՀՀ տրանսպորտի կառուցվածքում առկա են բոլոր ճյուղերն ու ենթաճյուղերը։
4) ՀՀ-ն ունի տնտեսության բարդ ու բազմաճյուղ կառուցվածք։

48 **ՀՀ-ում ոչ տեղական հումքի վրա հիմնված արտադրություն է.**

1) մոլիբդենի
2) պղնձի
3) ալյումինի
4) ոսկու



քարտեզ 2

49 **Քարտեզ 2-ում ո՞ր ջրամբարն է նշված Զ տառով:**

1) Կեչուտի
2) Ապարանի
3) Շամբի
4) Ախուրյանի

50 **Քարտեզ 2-ում ո՞ր քաղաքն է նշված Է տառով:**

1) Գավառ
2) Մարտունի
3) Սևան
4) Ճամբարակ

51 **Այն միջոցառումների համակարգը, որի գլխավոր խնդիրը բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումը, գնահատումն ու վերահսկումն է՝ ռացիոնալ բնօգտագործում և բնապահպանություն ապահովելու նպատակով, կոչվում է.**

1) մոնիթորինգ
2) էկոհամակարգ
3) աշխարհահամակարգ
4) կադաստր

52 **Բնական միջավայրի վրա մարդու բացասական ազդեցության օրինակ է.**

1) անտառային շերտերի ստեղծումը
2) ջրի օգտագործման փակ ցիկլի ներդրումը
3) բաց եղանակով շինանյութերի արդյունահանումը
4) լանջերի դարավանդավորումը

53 **Բուսական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում *չէ*.**

1) հատուկ պահպանվող տարածքների առանձնացումը
2) արոտաշրջանառության կազմակերպումը
3) անտառային հրդեհների դեմ պայքարը
4) կենսատեխնիկական միջոցառումների իրականացումը

54 **Բնության հատուկ պահպանվող տարածք *չէ*.**

1) արգելավայրը
2) արոտավայրը
3) արգելոցը
4) ազգային պարկը

55 **Ո՞ր պնդումն է *սխալ*:**

1) Տեղային էկոլոգիական աղետները շրջակա միջավայրի համամոլորակային փոփոխությունների պատճառ դառնալ չեն կարող:
2) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:
3) Աշխարհի խոշոր արդյունաբերական շրջաններին բնորոշ են սմոգը, թթվային անձրևները, աղմկային աղտոտումը:
4) Էկոլոգիական լարվածությունը պատճառ է դառնում էկոլոգիական ագրեսիայի, որն արտահայտվում է թունավոր տեխնոլոգիաներն ու թափոններն այլ երկրներ տեղափոխելով:

56 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են երկաթաքարի արդյունահանմամբ.**

1) Բրազիլիա
2) Ավստրալիա
3) Մեքսիկա
4) Գերմանիա
5) Իտալիա
6) Թուրքիա
7) Արգենտինա
8) Ինդոնեզիա

57 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են բամբակի արտադրությամբ.**

1) Ռուսաստան
2) Իրան
3) Վրաստան
4) Կանադա
5) Պակիստան
6) Ֆրանսիա
7) Գերմանիա
8) Չինաստան

58 **Գրել այն մշակաբույսերի համարները, որոնք տեխնիկական են.**

1) բրինձ
2) գարի
3) աշորա
4) ցորեն
5) եգիպտացորեն
6) բամբակենի
7) սուրճ
8) սոյա

59 **Գրել այն երկրների համարները, որտեղ արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում ատոմային էլեկտրակայաններին.**

1) Թուրքիա
2) Կանադա
3) Բրազիլիա
4) Ռուսաստան
5) Ֆրանսիա
6) Ճապոնիա
7) Չինաստան
8) Իրան

60 **Գրել ՀՀ-ում թվակազմանակով առաջին և երկրորդ տեղերը զբաղեցնող ազգային փոքրամասնությունների համարները.**

1) ռուսներ
2) ասորիներ
3) եզդիներ
4) հույներ
5) վրացիներ
6) պարսիկներ
7) արաբներ
8) ուկրաինացիներ

61 **Գրել ՀՀ ցեմենտի արտադրության կենտրոնների համարները.**

1) Արարատ
2) Երևան
3) Վաղարշապատ
4) Արտաշատ
5) Հրազդան
6) Արթիկ
7) Գորիս
8) Գյումրի

62 Տրված պետությունները դասավորել տարածքի մեծության նվազման կարգով:

1) Ռուսաստան
2) Կանադա
3) ԱՄՆ
4) Չինաստան

63 ՀՀ տրված գետերի համարները դասավորել դրանց թեքությունների աճման կարգով.

1) Հրազդան 2) Ողջի 3) Մեծամոր

(64 - 65) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, գագաթին՝ 520 մմ: Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18° է (հաշվարկ կատարել 5°-ով).

64 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

65 Որոշել օդի ջերմաստիճանը լեռան գագաթին:

66 Օդի բացարձակ խոնավությունը 12 գ/սմ³ է, իսկ հագեցման համար անհրաժեշտ խոնավությունը՝ 30 գ/սմ³: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

(67-68) Երկրի բնակչության թիվը 40 մլն. է, գյուղաբնակների բացարձակ թիվը՝ 16 մլն., իսկ տարածքի մակերեսը 200 հազ. կմ².

67 Որոշել բնակչության միջին խտությունը:

68 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

69 **Աշխարհի անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Խոզերի գլխաքանակով աշխարհում առաջատար տեղ են գրավում Հյուսիսային Աֆրիկան և Հարավարևմտյան Ասիան։
2) Ոչխարաբուծությունը զարգանում է հզոր համալիրներում, որոնք կառուցվում են բնակչության խիտ բնակեցված շրջաններում։
3) Շերամապահությամբ հնարավոր է զբաղվել այնտեղ, որտեղ աճում է թթենին։
4) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը։
5) Անասնապահության առաջատար ճյուղերն են ոչխարաբուծությունը և թռչնաբուծությունը։
6) Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է Հնդկաստանը, որին հաջորդում են Բրազիլիան, Չինաստանը և ԱՄՆ-ն։

70 **ՀՀ թեթև արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Ճյուղն աշխատատար է։
2) Կարի արդյունաբերությունը թեթև արդյունաբերության ենթաճյուղերից ամենացրված տեղաբաշխումն ուներ։
3) Մարալիկում կա բամբակամանվածքային ֆաբրիկա, որը մասնակիորեն է աշխատում։
4) Ճյուղի երիտասարդ ենթաճյուղերից է կոշկագործությունը։
5) Գորգագործությունը չունի արտահանման նշանակություն։
6) Գյումրին տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոն է։